ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏ

ՈՐՈՇՈՒՄ

ՀՀ, 0015, ք. Երևան, Արգիշտիի 1

№ 5568-Ա «13» նոյեմբերի 2026թ.

ԵՐԵՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԻ 2026 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 1-Ի Հ.4812-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով, հաշվի առնելով անշարժ գույքի նկատմամբ իրավունքների պետական գրանցման 11.06.2026թ. հ.13102026-01-0114 վկայականը.

1. Երևանի քաղաքապետի 2026 թվականի հոկտեմբերի 1-ի «Երևան, Էրեբունի, Սարի-Թաղ 8-րդ հ.29/1 հասցեում ընդհանուր համատեղ սեփականության իրավունքով քաղաքացի Վաչե Ալեքսանի Կարապետյանին, Քնարիկ Ալեքսանի Կարապետյանին պատկանող հողամասում գտնվող ինքնակամ իրականացված կառույցն օրինականացնելու մասին» հ.4812-Ա որոշման (այսուհետ՝ Որոշում) մեջ կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Որոշման վերնագրում և 1-ին կետում՝ «Սարի-Թաղ 8-րդ հ.29/1» բառերը փոխարինել «Սարի-Թաղ 8-րդ շարք հ.29/1» բառերով.

2) Որոշման 1-ին կետում՝ «հ.11062026-01-0199 վկայական տրված 11.06.2026թ.» բառերը փոխարինել «11.06.2026թ. հ.13102026-01-0114 վկայական» բառերով:

2. Սույն որոշումը կարող է վարչական կարգով բողոքարկվել Երևանի քաղաքապետին, կամ դատական կարգով՝ Հայաստանի Հանրապետության վարչական դատարան դրա ուժի մեջ մտնելու օրվանից երկամսյա ժամկետում:

3. Սույն որոշման կատարման կազմակերպումն ու պատասխանատվությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ճարտարապետության և քաղաքաշինության վարչության պետի վրա:

4.Որոշման կատարման հսկողությունը դնել Երևանի քաղաքապետարանի աշխատակազմի ղեկավարի վրա:

ՏԻԳՐԱՆ ԱՎԻՆՅԱՆ